ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-21/10-1

ք. Երևան «01» ապրիլի 2021թ.

ՀՀ արդարադատության նախարարությունն ի դեմս գլխավոր քարտուղար Սուրեն Գալստյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և «Կառամ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ռուզաննա Վռամբելյանի, որը գործում է ՍՊ ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տպագրական աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն պայմանները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

3.4.1 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 258 420 /երկու հարյուր հիսունութ հազար չորս հարյուր քսան/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված

գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի ձևի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ արդարադատության նախարարություն	«ՎԱՌՄ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8	ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 48/43
ՀՀ ֆինանսների նախարարության	Արդշինբանկ ՓԲԸ
գործառնական վարչություն	ՀՎ 2472303727050000
ՀՎ 900011194215	ՀԿՀ 00488698
ՀԿՀ՝ 02506264	
Ա. Ղազարյան	Դ. Վարքելյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«01» ապրիլ 2021թ. կնքված
ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-21/10 -1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Աշխատանքի տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Միավորի գինը/ ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման հասցեն	կատարման Վաղծանկալ ժամկետը
		Չափսը՝ -21սմx30սմ, A4						
1	22451180/2	Կազմը՝-երկկողմանի, ֆութբորդ ստվարաթուղթ՝ դիմերեսին 1 գույնի (սև) տպագրությամբ, ստվարաթղթի քաշը՝ 300-350գ/մ2, մատյանը ձախ կողմից երկայնքով բումվելինապատված՝ ամրության համար: Կազմելու եղանակը՝- թելակար, լրացուցիչ թելակար՝ էջերի քանակը ֆիքսելու համար: Միջուկը՝- թուղթ օֆսեթ-80գ/մ2, թղթի սպիտակությունը՝ առնվազն 155% (ըստ CIE համակարգի, առանց շեղումների) Միջուկի տպագրությունը՝- երկկողմանի, 1 գույնով՝ սև, օֆսեթ եղանակով: Թերթերի քանակը՝ 100 թերթ /200էջ/: 25 հատը այլ տեքստով, իսկ 6 հատը այլ տեքստով:	հատ	754.84	23,400	31	ՀՀ ք.Երևան, Վ. Սարգսյան 3/8	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 45 օրացույցային օրվա ընթացքում:
		Չափսը՝ -21սմx30սմ, A4						
2	22451180/5	Կազմը՝-երկկողմանի, ֆութբորդ ստվարաթուղթ՝ դիմերեսին 1 գույնի (սև) տպագրությամբ, ստվարաթղթի քաշը՝ 300-350գ/մ2, մատյանը ձախ կողմից երկայնքով բումվելինապատված՝ ամրության համար: Կազմելու եղանակը՝- թելակար, լրացուցիչ թելակար՝ էջերի քանակը ֆիքսելու համար: Միջուկը՝- թուղթ օֆսեթ-80գ/մ2, թղթի սպիտակությունը՝ առնվազն 155% (ըստ CIE համակարգի, առանց շեղումների) Միջուկի տպագրությունը՝- երկկողմանի, 1 գույնով՝ սև, օֆսեթ եղանակով: Թերթերի քանակը՝ 100 թերթ /200էջ/:	հատ	753.6	18,840	25	ՀՀ ք.Երևան, Վ. Սարգսյան 3/8	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 45 օրացույցային օրվա ընթացքում:

3	22451180/4	Չափսը՝ -21սմx30սմ, A4 Կազմը՝-երկկողմանի, ֆութբորդ ստվարաթուղթ՝ դիմերեսին 1 գույնի (սև) տպագրությամբ, ստվարաթղթի քաշը՝ 300-350գ/մ2, մատյանը ձախ կողմից երկայնքով բումվելինապատված՝ ամրության համար: Կազմելու եղանակը՝- թելակար, լրացուցիչ թելակար՝ էջերի քանակը ֆիքսելու համար: Միջուկը՝- թուղթ օֆսեթ-80գ/մ2, թղթի սպիտակությունը՝ առնվազն 155% (ըստ CIE համակարգի, առանց շեղումների) Միջուկի տպագրությունը՝- երկկողմանի, 1 գույնով՝ սև, օֆսեթ եղանակով: Թերթերի քանակը՝ 100 թերթ /200էջ/:	հատ	753.6	18,840	25	ՀՀ ք.Երևան, Վ. Սարգսյան 3/8	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 45 օրացույցային օրվա ընթացքում:
4	22451180/3	Չափսը՝ -21սմx30սմ, A4 Կազմը՝-երկկողմանի, ֆութբորդ ստվարաթուղթ՝ դիմերեսին 1 գույնի (սև) տպագրությամբ, ստվարաթղթի քաշը՝ 300-350գ/մ2, մատյանը ձախ կողմից երկայնքով բումվելինապատված՝ ամրության համար: Կազմելու եղանակը՝- թելակար, լրացուցիչ թելակար՝ էջերի քանակը ֆիքսելու համար: Միջուկը՝- թուղթ օֆսեթ-80գ/մ2, թղթի սպիտակությունը՝ առնվազն 155% (ըստ CIE համակարգի, առանց շեղումների) Միջուկի տպագրությունը՝- երկկողմանի, 1 գույնով՝ սև, օֆսեթ եղանակով: Թերթերի քանակը՝ 100 թերթ /200էջ/:	հատ	753.6	18,840	25	ՀՀ ք.Երևան, Վ. Սարգսյան 3/8	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 45 օրացույցային օրվա ընթացքում:
5	22451180/6	Չափսը՝ -21սմx30սմ, A4: Կազմը՝-երկկողմանի, ֆութբորդ ստվարաթուղթ՝ դիմերեսին 1 գույնի (սև) տպագրությամբ, ստվարաթղթի քաշը՝ 300-350գ/մ2, մատյանը ձախ կողմից երկայնքով բումվելինապատված՝ ամրության համար: Կազմելու եղանակը՝- թելակար, լրացուցիչ թելակար՝ էջերի քանակը ֆիքսելու համար: Միջուկը՝- թուղթ օֆսեթ-80գ/մ2, թղթի սպիտակությունը՝ առնվազն 155% (ըստ CIE համակարգի, առանց շեղումների) Միջուկի տպագրությունը՝- երկկողմանի, 1 գույնով՝ սև, օֆսեթ եղանակով: Թերթերի քանակը՝ 100 թերթ /200էջ/: 10 հատը այլ , 5 հատը այլ, 5 հատը այլ, 4 հատը, 4 հատը այլ տեքստերով:	հատ	756.43	21,180	28	ՀՀ ք.Երևան, Վ. Սարգսյան 3/8	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 45 օրացույցային օրվա ընթացքում:
9	22451180/10	Չափսը՝ -21սմx30սմ, A4 Կազմը՝-կոշտ ստվարաթղթե հիմքով, ամբողջությամբ բումվելինապատված՝ դիմերեսին 1 գույնի (սև) տպագրությամբ, կազմի ստվարաթղթի քաշը՝ 1000-1500գ/մ2,	հատ	3 000	6,000	2	ՀՀ ք.Երևան, Վ. Սարգսյան 3/8	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 45 օրացույցային օրվա ընթացքում:

		մատյանը ձախ կողմից երկայնքով կրկնակի բումվելինապատված՝ ամրության համար: Կազմելու եղանակը՝- թելակար, լրացուցիչ թելակար՝ էջերի քանակը ֆիքսելու համար: Միջուկը՝- թուղթ օֆսեթ-80գ/մ2, թղթի սպիտակությունը՝ առնվազն 155% (ըստ CIE համակարգի, առանց շեղումների) Միջուկի տպագրությունը՝- երկկողմանի, 1 գույնով՝ սև, օֆսեթ եղանակով: Թերթերի քանակը՝ 200 թերթ /400էջ/: Չափսը՝ -21սմx30սմ, A4 Կազմը՝-կոշտ ստվարաթղթե հիմքով, ամբողջությամբ բումվելինապատված՝ դիմերեսին 1 գույնի (սև) տպագրությամբ, կազմի ստվարաթղթի քաշը՝ 1000-1500գ/մ2,						
10	22451180/11	մատյանը ձախ կողմից երկայնքով կրկնակի բումվելինապատված՝ ամրության համար: Կազմելու եղանակը՝- թելակար, լրացուցիչ թելակար՝ էջերի քանակը ֆիքսելու համար: Միջուկը՝- թուղթ օֆսեթ-80գ/մ2, թղթի սպիտակությունը՝ առնվազն 155% (ըստ CIE համակարգի, առանց շեղումների) Միջուկի տպագրությունը՝- երկկողմանի, 1 գույնով՝ սև, օֆսեթ եղանակով: Թերթերի քանակը՝ 200 թերթ /400էջ/:	հատ	3 000	6,000	2	ՀՀ ք.Երևան, Վ. Սարգսյան 3/8	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 45 օրացույցային օրվա ընթացքում:
11	22451180/12	Չափսը՝ -21սմx30սմ, A4 Կազմը՝-կոշտ ստվարաթղթե հիմքով, ամբողջությամբ բումվելինապատված՝ դիմերեսին 1 գույնի (սև) տպագրությամբ, կազմի ստվարաթղթի քաշը՝ 1000-1500գ/մ2, մատյանը ձախ կողմից երկայնքով կրկնակի բումվելինապատված՝ ամրության համար: Կազմելու եղանակը՝- թելակար, լրացուցիչ թելակար՝ էջերի քանակը ֆիքսելու համար: Միջուկը՝- թուղթ օֆսեթ-80գ/մ2, թղթի սպիտակությունը՝ առնվազն 155% (ըստ CIE համակարգի, առանց շեղումների) Միջուկի տպագրությունը՝- երկկողմանի, 1 գույնով՝ սև, օֆսեթ եղանակով: Թերթերի քանակը՝ 250 թերթ /500էջ/:	հատ	3 300	6,600	2	ՀՀ ք.Երևան, Վ. Սարգսյան 3/8	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 45 օրացույցային օրվա ընթացքում:
12	22451180/13	Չափսը՝ -21սմx30սմ, A4 Կազմը՝-կոշտ ստվարաթղթե հիմքով, ամբողջությամբ բումվելինապատված՝ դիմերեսին 1 գույնի (սև) տպագրությամբ, կազմի ստվարաթղթի քաշը՝ 1000-1500գ/մ2, մատյանը ձախ կողմից երկայնքով կրկնակի բումվելինապատված՝ ամրության համար: Կազմելու եղանակը՝- թելակար, լրացուցիչ թելակար՝ էջերի	հատ	3 300	6,600	2	ՀՀ ք.Երևան, Վ. Սարգսյան 3/8	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 45 օրացույցային օրվա ընթացքում:

		քանակը ֆիքսելու համար: Միջուկը՝- թուղթ օֆսեթ-80գ/մ2, թղթի սպիտակությունը՝ առնվազն 155% (ըստ CIE համակարգի, առանց շեղումների) Միջուկի տպագրությունը՝- երկկողմանի, 1 գույնով՝ սև, օֆսեթ եղանակով: Թերթերի քանակը՝ 250 թերթ /500էջ/:						
15	22451180/16	Չափսը՝ 29.7սմx42սմ, A 3 Տպագրությունը՝- երկկողմանի, մեջտեղից ծալված, 1 գույնով՝ սև, օֆսեթ եղանակով:Թուղթը՝- թուղթ օֆսեթ-80գ/մ2, թղթի սպիտակությունը՝ առնվազն 155% (ըստ CIE համակարգի):	հատ	28.8	11,520	400	ՀՀ ք.Երևան, Վ. Սարգսյան 3/8	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 45 օրացույցային օրվա ընթացքում:
16	22451180/17	Չափսը՝ -30սմx42սմ, A3: Կազմը՝-երկկողմանի, ֆութբորդ ստվարաթուղթ՝ դիմերեսին 1 գույնի (սև) տպագրությամբ, ստվարաթղթի քաշը՝ 300-350գ/մ2, մատյանը ձախ կողմից երկայնքով բումվելինապատված՝ ամրության համար: Կազմելու եղանակը՝- թելակար, լրացուցիչ թելակար՝ էջերի քանակը ֆիքսելու համար: Միջուկը՝- թուղթ օֆսեթ-80գ/մ2, թղթի սպիտակությունը՝ առնվազն 155% (ըստ CIE համակարգի, առանց շեղումների) Միջուկի տպագրությունը՝- միակողմանի, 1 գույնով՝ սև, օֆսեթ եղանակով, միջուկի էջերը տպագիր հերթական համարակալմամբ՝ սկսած պատվիրատուի տված հերթական համարից: Թերթերի քանակը՝ 100 թերթ/200էջ/:	հատ	1 800	45,000	25	ՀՀ ք.Երևան, Վ. Սարգսյան 3/8	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 45 օրացույցային օրվա ընթացքում:
17	22451180/18	Չափսը՝ -21սմx30սմ, A4 Կազմը՝-երկկողմանի, ֆութբորդ ստվարաթուղթ՝ դիմերեսին 1 գույնի (սև) տպագրությամբ, ստվարաթղթի քաշը՝ 300-350գ/մ2, մատյանը ձախ կողմից երկայնքով բումվելինապատված՝ ամրության համար: Կազմելու եղանակը՝- թելակար, լրացուցիչ թելակար՝ էջերի քանակը ֆիքսելու համար: Միջուկը՝- թուղթ օֆսեթ-80գ/մ2, թղթի սպիտակությունը՝ առնվազն 155% (ըստ CIE համակարգի, առանց շեղումների) Միջուկի տպագրությունը՝- երկկողմանի, 1 գույնով՝ սև, օֆսեթ եղանակով: Թերթերի քանակը՝ 100 թերթ/200էջ/	հատ	756	37,800	50	ՀՀ ք.Երևան, Վ. Սարգսյան 3/8	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 45 օրացույցային օրվա ընթացքում:
18	22451180/19	Չափսը՝ -21սմx30սմ, A4 Կազմը՝-երկկողմանի, ֆութբորդ ստվարաթուղթ՝ դիմերեսին 1 գույնի (սև) տպագրությամբ, ստվարաթղթի քաշը՝ 300-350գ/մ2, մատյանը ձախ կողմից երկայնքով բումվելինապատված՝ ամրության համար: Կազմելու եղանակը՝- թելակար, լրացուցիչ թելակար՝ էջերի	հատ	756	37,800	50	ՀՀ ք.Երևան, Վ. Սարգսյան 3/8	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 45 օրացույցային օրվա ընթացքում:

		քանակը ֆիքսելու համար: Միջուկը՝- թուղթ օֆսեթ-80գ/մ2, թղթի սպիտակությունը՝ առնվազն 155% (ըստ CIE համակարգի, առանց շեղումների) Միջուկի տպագրությունը՝- երկկողմանի, 1 գույնով՝ սև, օֆսեթ եղանակով: Թերթերի քանակը՝ 100 թերթ/200էջ/						

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ արդարադատության նախարարություն
ՀՀ ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011194215
ՀՎՀՀ՝ 02506264

Ա. Գրիգորյան
/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ

«ՎԱՌՄ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 48/43
Արդշինբանկ ՓԲԸ
Հ/Հ 2472303727050000
ՀՎՀՀ 00488698

Ռ. Առաքելյան
/ստորագրություն/

Հավելված N 2
« 01 » ապրիլ 2021թ. կնքված
ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-21/10 -1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄՍԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	22451180/2	Դիմումների հաշվառման մատյան	-	-	-	17550	17550	23,400	23,400	23,400	23,400	23,400	23,400	23,400	23,400
2	22451180/5	ՔԿԱԳ-ի ծննդյան դիմումների հաշվառման մատյան	-	-	-	14130	14130	18,840	18,840	18,840	18,840	18,840	18,840	18,840	18,840
3	22451180/4	ՔԿԱԳ-ի տեղեկանքների վերաբերյալ դիմումների հաշվառման մատյան	-	-	-	14130	14130	18,840	18,840	18,840	18,840	18,840	18,840	18,840	18,840
4	22451180/3	ՔԿԱԳ-ի վկայականների ելքի հաշվառման մատյան	-	-	-	14130	14130	18,840	18,840	18,840	18,840	18,840	18,840	18,840	18,840
5	22451180/6	Պայմանագրերի մատյան	-	-	-	15885	15885	21,180	21,180	21,180	21,180	21,180	21,180	21,180	21,180
9	22451180/10	Վերծանման մատյան Ձև 5, 200 թերթ գաղտնի	-	-	-	4500	4500	6,000	6,000	6,000	6,000	6,000	6,000	6,000	6,000
10	22451180/11	Ծածկագրման մատյան Ձև 4, 200 թերթ գաղտնի	-	-	-	4500	4500	6,000	6,000	6,000	6,000	6,000	6,000	6,000	6,000
11	22451180/12	Մատյան մտից փաստաթղթերի հաշվառման Ձև 33, 250 թերթ	-	-	-	4950	4950	6,600	6,600	6,600	6,600	6,600	6,600	6,600	6,600

12	22451180/13	Մատյան ելից փաստաթղթերի հաշվառման Ձև 27, 250 թերթ	-	-	-	4950	4950	6,600	6,600	6,600	6,600	6,600	6,600	6,600	6,600
15	22451180/16	Հարցաթերթ (գաղտնի), Անձնական գործ /2 թերթ/	-	-	-	8640	8640	11,520	11,520	11,520	11,520	11,520	11,520	11,520	11,520
16	22451180/17	Պատժի ավարտից հետո դատապարտյալ ին տրվող տեղեկանքի մատյան	-	-	-	33750	33750	45,000	45,000	45,000	45,000	45,000	45,000	45,000	45,000
17	22451180/18	Մուտքի փաստաթղթերի գրանցման մատյան (100 թերթ)	-	-	-	28350	28350	37,800	37,800	37,800	37,800	37,800	37,800	37,800	37,800
18	22451180/19	Ելքի փաստաթղթերի գրանցման մատյան (100 թերթ)	-	-	-	28350	28350	37,800	37,800	37,800	37,800	37,800	37,800	37,800	37,800

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ արդարադատության նախարարություն
ՀՀ ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011194215
ՀՎՀՀ՝ 02506264

Ս. Գալստյան
/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ

«ՎԱՌՄ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 48/43
Արդշինբանկ ՓԲԸ
Հ/Հ 2472303727050000
ՀՎՀՀ 00488698

Ռ. Առաքելյան
/ստորագրություն/

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն